ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ապրիլի 30-ից մայիսի 13-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Նանջինգ քաղաքում կայացած «Կլիմայի փոփոխության հաղթահարման տեխնոլոգիաների փոխանցում՝ գլոբալ զարգացման նախաձեռնության շրջանակներում» խորագրի ներքո սեմինարին մասնակցության արդյունքների մասին

1. Գործուղվողը

Վիոլետա Աղաջանյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Արտաքին կապերի վարչության Եվրասիական տնտեսական միության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024թ. ապրիլի 22-ի թիվ 839-Ա հրամանի համաձայն 2024 թվականի ապրիլի 28-ից մայիսի 15-ը գործուղվել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Նանջինգ քաղաք

4. Հրավիրող կողմը

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից հատկացվող աջակցության շրջանակներում Նանջինգի տեղեկատվական գիտությունների և տեխնոլոգիաների համալսարան

5. Գործուղման նպատակը

Մասնակցել եմ «Կլիմայի փոփոխության հաղթահարման տեխնոլոգիաների փոխանցում՝ գլոբալ զարգացման նախաձեռնության շրջանակներում» խորագրի ներքո սեմինարին, ինչպես նաև Տարածաշրջանային կլիմայի մոնիտորինգի, գնահատման և կանխատեսման Ասիայի երկրների համար ֆորումի քսաներորդ նստաշրջանի աշխատանքներին:

6. Քննարկված թեմաները

- Վերականգնվող էներգիայի զարգացման միտումներ, իրականացվող միջոցառումներ,

- Էներգետիկ կլիմայական ծառայություններ և ազդեցության գնահատում ջրային ռեսուրսների վրա,
- Կլիմայի խնդիրների լուծմանն ուղղված ֆինանսավորման աղբյուրների որոշում և վերջիններիս գնահատում, ներառյալ մասնավոր հատվածի ֆինանսական միջոցների մոբիլիզացում,
- Կլիմայի փոփոխության ազդեցությունները և կլիմայական ռիսկերի կառավարումը, ներառյալ կլիմայի ռիսկերի ընգրկումը բյուջետային պլանավորման մեջ,
- Ներդրումային ծրագրերի մշակումը Փարիզյան համաձայնագրի պահանջներին համապատասխան,
- Ցածր ածխածնային և կլիմայի պահմանմանն ուղղվող միջոցառումների մշակում,
- Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրերի ներկայացում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի են ունեցել հանդիպումներ Նանջինգի համալսարանի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի, Եգիպտոսի, Նիգերիայի, Մալազիայի, Տանզանիայի, Վիետնամի, Սողոմոնյան կղզիների, Աֆղանստանի համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների, ոլորտի միջազգային փորձագետների հետ:

Դասընթացի ընթացքում ներկայացվել է յուրաքանչյուր կողմի փորձը վերականգնվող էներգիայի զարգացման, կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերի կարգավորման ուղղությամբ, մատնանշվել են առկա մարտահրավերները և հետագա գործողությունները վերը նշված նախաձեռնությունների կատարելագործման ուղղությամբ:

Մայիսի 9–10-ը, որպես հյուր, մասնակցել ենք Ցինդաո քաղաքում կազմակերպված Ասիայի կլիմայի տարածաշրջանային մոնիտորինգի, գնահատման և կանխատեսման ֆորումի 20-րդ նստաշրջանին:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

20.05.2024թ.